Մայր Աթոռոյս միաբան ԵՂԻԱԶԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Տէր Կարապետեան առինջեցի ի հասակի 71 ամաց երկարատև անբուժելի հիւանդութիւնից յետոյ կնքեց իւր մահկանացու երկրաւոր կեանքը Մարտ ամսոյս 14 ին չորեքշաբթի օրը կէս օրից յետոյ 3-րդ ժամին և հետևեալ օրը ճաշու ժամից յետոյ, պատշաճաւոր յուղարկաւորութեամբ թաղուեց Մայր Աթոռոյս Միաբանութեան Հանգստարանում։

Հանգուցեալը 1829 թուին մտել է Մայր Աթոռոյս Ժառանգ· Հոգ· Դպրանոցը, ուր շարունակելով իւր ուսման ընթացքը՝ 1835 թուին ստացաւ կիսասարկաւագութիւն· 1839 թուին ձեռնադրուեց սարկաւագ, իսկ 1842 թուին՝ աբեղայ, և Ս· Էջմիածնի Հոգ· դպրանոցում 1841 թուից մինչև 1848 թուի Յուլիսի 30ը կատարեց ուսուցչութեան պաշտօն։ Ջերմեռանդն ծառայութեան համար 1850 թուին Նոյեմ· 16 ին վարձատրուեց վարդապետական լանջական ականակուռ խաչով· 1852 թուին Հանգ· Ներսէս Ե· Կաթուղիկոսի ձեռնադ· ծայր· վարդապետ· կոչումն ստացաւ 1857 թուին Յունվ· 12-ին առաջարկութեամբ նոյն Հանգ· Ներսէս Կաթուղիկոսի բարձրագոյն հաստատութեամբ նշանակուեց Սինօդի անդամ· 1857 թուի Մարտի 29-ից մինչև 1859 թիւը վարեց Մ· Աթոռոյս ծախսարարութեան պաշտօնը· 1859 թ· Դեկ· 6 ին ձեռնադրութեամբ Հանգ· Մատթէոս Կաթուղիկոսի բարձրացաւ յաստիճ· եպիսկոպոսութեան և 1861 թուին Նորին Վեհափառութիւնից ստացաւ Արքեպիսկոպոսութեան կոչումն· 1860 թուից մինչև 1861

թիւը վարեց վերատեսչի պաշտօն՝ ժառանգաւորաց դպրոցում։ 1863 թուի Յուլիսի 17-ից մինչև 1865ը վարեց Մայր Աթոռոյս Աւագ լուսարարութեան պաշտօնը։ 1864 թուի Մայիսի 25 ին առաջարկութեամբ Հանդուցեալ Մատթէոս Կաթուղիկոսի արձակուեց Սինոդի անդամութիւնից և 1865 թուի Նոյեմբ. 22 ին միջնորդութեամբ Տեղակալի Ատենապետի Սինոդի, բարձրագոյն հաճութեամբ՝ նշանակուեց ժամանակաւոր Կառավարիչ Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանայ թեմի։ 1868 թուին արձակուելով յիշեալ պաշտօնից վերադարձաւ Ս. Էջմիածին և տնօրէնութեամբ Հանդ. Գէորգ Կաթուղիկոսի 1873 թուից մինչև 1881 թիւը վարեց Երևանայ թեմի Փոխանորդութեան պաշտօնը։

Միաբանութիւնս խորին տխրութեամբ յանձնելով հողին իւր բաղմամեայ միաբանակցի և արդիւնաւոր պաշտօնէի երկրաւոր նշխարը՝ աղօթումէ առ Աստուած լուսաւորել Հանդուցելոյ հոգին իւր սրբերի և արդարների հետ դասաւորելով։

Նադվօրնի Սօվետնիկ ՍՈՒՔԻԱՍ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ ԹԱՂԻԱՆՈՍԵԱՆՑ Ատենադպիր Սինոդի Մայր Աթոռոյս 58 տարեկան հասակում կնքեց իւր մահկանացու կեանքը Երևանում Մարտ ամսոյս 9 ին երեկոյեան 11 ժամին՝ կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Եւ ամսոյս 11 ին, կիւրակէ օրը, տեղւոյն հասարակաց Հանգըստարանում թաղուեց։ Թաղման հանդիսին ներկայ էին ըստ կարգադրութեան Հոգևոր Իշխանութեան՝ երկու Եպիսկոպոս և երկու Վարդապետ։

Հանդուցեալը 1842 թուին աւարտելով ուսման ընթացքը Երևանու Հոգևոր դպրոցում՝ 1845 թուին Փետր. 5 ին մտաւ ծառայութիւն Ս. Էջմիածնայ Սինոդը։ 1846 թուի Սեպտ. 19 նշանակուեց կարգապահ մատենավար և նոյն թուի Հոկտ. 16 ին օգնական ատենադպրի։ 1856 թ. Նոյեմբ. 15 ին մասնակցեց քննութեանը Ալէքսանդրապոլի վիճակի Եկեղեց. գործերի և Հոգ. Կառավարութեան վերայ, օրինակելի ջերմեռանդութեամբ։ 1857 թուին ըստ հաճութեան բարեյիշատակ Ներսէս Ե. Կաթուղիկոսի՝ նշանակուեց Ատենադպիր Սինոդի։ 1859 թուին Հոկտ. 5 ին և 1861 թ. Ապրիլի 19 ըստ տնօրէնութեան Հանդ. Մատթէոս կաթուղիկոսի՝ մասնակցեց Թիֆլիզու Ներսիսեան Հոգ. դպրանոցի գործերը կարգի դնելուն։ 1870 թուին Նոյեմբ. 20 ին ըստ իւր հրաժարականի արձակուելով Սինոդի Ատենադպրութեան պաշ-